

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀՄԱՅԱԿՅԱՆ ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ**

**ԳՐԻԳՈՐ ԳԱՓԱՆՑՅԱՆԸ ԵՎ ԽԵԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ  
(ԽԵԹԱՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2013**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության  
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Քոսյան Ա.Վ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ  
Պետրոսյան Ս.Գ.

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Գրեկյան Ե.Հ.

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. դեկտեմբերի 18-ին, ժ. 14:00-  
ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006  
«Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի  
նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ  
արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2013 թ. նոյեմբերի 16-ին

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար

պ.գ.թ., դոցենտ Ռ.Պ. Ղազարյան

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### **Թեմայի արդիականությունը**

Ականավոր հայագետ Գրիգոր Ղափանցյանի՝ խեթահայկական պատմամշակութային փոխառնչությունների բնագավառում կատարած ուսումնասիրությունների արժևորումը խիստ արդիական է, քանի որ այս հարցերը դեռևս անցյալ դարի 20-ականներից հայ և օտարազգի ուսումնասիրողների գիտական հետաքրքրությունների կիզակետում են եղել և շարունակում են պահպանել իրենց այժմեականությունը նաև այսօր: Դա պայմանավորված է նրանով, որ վերոնշյալ հարցերը խիստ խնդրահարույց են և կապված են գիտության մեջ ցայսօր տարակարծությունների տեղիք տվող մի շարք այլ խնդիրների հետ, որոնք են՝ հնդեվրոպական մախահայրենիքի տեղադրության վայրը, խեթերի՝ Փոքր Ասիա ներթափանցման ժամանակաշրջանի որոշումը (եթե նրանք իրոք այլ վայրերից են տեղափոխվել այդտեղ), հայ ժողովրդի կազմավորման ժամանակաշրջանի և բնօրրանի խնդիրները, խեթահայկական լեզվամշակութային փոխառնչությունների ուղիղ կամ միջնորդավորված լինելն ու դրանց ժամանակագրության հարցը, խեթալուվիական լեզուների հետ հայերենի ունեցած որոշ ընդհանրությունների ընդունումը կամ բացառումը, «հայ» ինքնանվան և Հայաստ քաղաքական միավորի հետ այդ էթնոնիմի նույնացման խնդիրը, Հայաստի տեղադրության հարցը և մի շարք այլ խնդիրներ, որոնք անմիջականորեն կապված են նաև հայոց ազգաժազման հարցի հետ:

Խեթահայկական փոխառնչությունների վերաբերյալ ուսումնասիրությունները արդիական են ժամանակակից խեթագիտության, հնդեվրոպաբանության, Հին աշխարհի պատմության, համեմատական լեզվաբանության և առասպելաբանության, ինչպես նաև, հայագիտության մի շարք հարցերի լուսաբանման առումով:

### **Աշխատանքի նպատակներն ու խնդիրները**

Ատենախոսության նպատակն է վեր հանել Գ. Ղափանցյանի աշխատություններում խեթահայկական պատմամշակութային փոխառնչություններին նվիրված ուսումնասիրություններն ու դիտարկումները, արժևորել դրանք իր ժամանակաշրջանի կտրվածքում՝ փորձելով ցույց տալ, թե որքանով են դրանք պահպանել իրենց այժմեականությունն այսօր՝ խեթագիտության և հայագիտության այդ ոլորտում արձանագրված ձեռքբերումների համատեքստում: Այդ նպատակով անդրադարձել ենք հետևյալ խնդիրներին.

1. Հայաստ պետության քաղաքական դերի, բնակչության էթնիկ պատկանելության հարցերի քննարկումը ըստ Գ. Ղափանցյանի և այլոց աշխատությունների: Հայաստային առնչվող գիտության մեջ այսօր շրջանառվող տեսակետների ներկայացումը:
2. Հայաստան տեղանունների, անձնանունների և դիցանունների վերաբերյալ Գ. Ղափանցյանի տեսակետների քննարկումը արդի գիտության

նվաճումների համատեքստում: Հայաստեն լեզվի վերաբերյալ արտահայտված գիտական տեսակետների մեկտեղումը, գնահատումը և սեփական մոտեցումների ձևակերպումը:

3. Հայասական դիցարանի վերաբերյալ Գ.Ղափանցյանի տեսակետների քննարկումը, այլ ուսումնասիրողների դիտարկումների հետ համադրումը, սեփական մոտեցումների ձևակերպումը: Հայասական և հայկական դիցարանների միջև որոշ ընդհանրությունների և հնարավոր ժառանգականության բացահայտումը:

4. Խեթահայկական պատմամշակութային փոխառնչությունների համատեքստում հայոց ազգածագման հարցերի վերաբերյալ Գ.Ղափանցյանի տեսակետների ներկայացումը և գնահատումը:

5. Խեթական և հայկական առասպելաբանությունների ընդհանրական բնութագրերի ներկայացումը:

6. Խեթահայկական ծիսա-առասպելաբանական փոխառնչություններին նվիրված Գ.Ղափանցյանի դիտարկումների քննարկումը, արդի գիտության համատեքստում նրանց արժևորումը, քննարկվող նյութի վերաբերյալ այլ հեղինակների տեսակետների և սեփական մի շարք դիտարկումների ու հարցադրումների ներկայացումը:

7. Հնդեվրոպական լեզվաընտանիքում խեթերենի և հայերենի զբաղեցրած դիրքի քննարկումը, նրանց ժամանակագրության և այլ հնդեվրոպական ու ոչ հնդեվրոպական լեզուների հետ փոխառնչության հարցերի և այս խնդիրների վերաբերյալ Գ.Ղափանցյանի տեսակետների ու արդի գիտության մեջ շրջանառվող մոտեցումների ներկայացումը:

8. Գ.Ղափանցյանի աշխատություններում զետեղված խեթահայկական բառային զուգադիպումների առավել ընդհանրական ցանկի ներկայացումը, ճշգրտումը, այլ ուսումնասիրողների տեսակետների հետ համադրումը և գնահատումը, առաջին անգամ այդ բառապաշարի խնաստային խմբերի բաժանումը և դրանց հիման վրա արված մախնական եզրակացությունների ներկայացումը:

### **Առեմախոսության գիտական նորույթը**

Սույն թեման առաջին անգամ է շրջանառվում գիտության մեջ: Այս ոլորտում Գ.Ղափանցյանի կատարած ուսումնասիրությունների առանձին բնագավառներին (պատմություն, լեզվաբանություն, առասպելաբանություն) կան դիտարկումներին անդրադարձել են տարբեր ուսումնասիրողներ՝ կապված վերոնշյալ թեմային առնչվող տարբեր խնդիրների հետ: Սակայն այս բնագավառի վերաբերյալ նրա ուսումնասիրությունների ամբողջական, ընդհանրացված, արդի գիտության համատեքստում քննարկված և գնահատված ու մի շարք սեփական հարցադրումներով հագեցած մոտեցում ցուցաբերվում է առաջին անգամ: Խեթահայկական պատմամշակութային փոխառնչություններին վերաբերող նյութերի մեկտեղման արդյունքում հնարավորինս ամբողջական պատկերացում կարելի է կազմել հայ ժողովրդի կազմավորման գործընթացում, հայոց լեզվում և հայոց հոգևոր մշակույթում

խեթալուվիական ժողովուրդների ունեցած դերակատարության և ներդրման մասին, ինչպես նաև բացահայտել հայոց ազգաձագմանը վերաբերող մի շարք խնդրահարույց հարցեր:

### **Ատենախոսության ժամանակագրական սահմանները**

Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են Ք.ա. II հազարամյակի կեսերից մինչև I հազարամյակի սկիզբն ընկած ժամանակաշրջանը, որի ընթացքում ձևավորվել և զարգացել են խեթահայկական պատմամշակութային փոխառնչությունները: Ժամանակաշրջանի նման ընտրությունը պայմանավորված է նաև գիտության մեջ առկա երկու մոտեցումներով: Գիտնականների մի մասը խեթահայկական փոխառնչությունները հակված է ժամանակագրելու Խեթական տերության գոյության փուլով՝ առնվազն Ք.ա. II հազարամյակի կեսով, իսկ մյուս մասն այդ փոխառնչությունները թվագրում է Ք.ա. II հազարամյակի վերջով և I-ի սկզբով՝ դրանք վերագրելով «Ուշ խեթական» պետությունների փուլին:

### **Ատենախոսության մեթոդաբանական հիմքը**

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են պատմավերլուծական, պատմամշակութային քննության մեթոդները: Ելնելով հետազոտվող թեմայի բազմաշերտ բնույթից՝ աշխատանքում կատարվել է նաև աղբյուրագիտական, լեզվաբանական և մշակութաբանական նյութերի քննական վերլուծություն:

### **Աշխատանքի կիրառական նշանակությունը**

Ատենախոսության հիմնական բովանդակությունը, դրույթներն ու եզրահանգումները կարող են հիմք հանդիսանալ Հին Արևելքի պատմության, խեթագիտության, համեմատական առասպելաբանության, հայոց պատմության, հայ առասպելաբանության, հայոց լեզվի պատմության և հայոց ազգաձագման առանձին հիմնախնդիրների ուսումնասիրության, ինչպես նաև, այս թեմաներին առնչվող հետազոտությունների համար, կիրառվել դասախոսություններում և պատմամշակութային ու լեզվաբանական ուղղվածությամբ հատուկ դասընթացներում:

### **Աշխատանքի փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը**

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածներում, տեղական և միջազգային մի շարք գիտաժողովներում ներկայացված զեկուցումներում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին արևելքի բաժնի կողմից:

### **Սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն**

Աշխատանքը կատարվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն և

Ֆրանսերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և վերլուծական գրականության հիման վրա: Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուրներ են ծառայել խեթական սեպագիր աղբյուրները, որոնցում հիշատակվում է Հայասան և Ազգի պետական կազմավորումների մասին: Առանձնապես կարևոր են միջին խեթական և նոր խեթական ժամանակաշրջանի հետևյալ սեպագիր արձանագրությունները. Խեթական արքա Առնուվանդաս I-ի օրոք կազմված «Պախխուվացի Սիտայի» տեքստը (Ք.ա. XIV դարի առաջին կես)<sup>1</sup>, հստակ թվագրություն չունեցող խեթահայասական պայմանագիրը, որը հավանաբար վերաբերում է Թուդխալիյաս III-ի ժամանակաշրջանին (Ք.ա. 1360-1344 թթ.)<sup>2</sup>: Առանձնապես մեծ նշանակություն ունեն խեթական արքա Սուպալիուլիումաս I-ի (Ք.ա. 1344-1322 թթ.) տարեգրությունները, որոնցից մենք տեղեկանում ենք, որ Սուպալիուլիումասը իր հոր՝ Թուդխալիյաս III-ի հետ մասնացել է երկու ռազմական արշավանքների դեպի Հայասան<sup>3</sup>:

Հայասայի մասին տեղեկություններ են պարունակվում նաև Սուպալիուլիումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև կնքված պայմանագրում<sup>4</sup>, Մուրսիլիա II-ի (Ք.ա. 1321-1295 թթ.) տարեգրություններում<sup>5</sup>: Հայասայի մասին հիշատակվում է նաև Խաթթուսիլիա III-ի (Ք.ա. 1267-1237 թթ.) «Ինքնակենսագրության» մեջ<sup>6</sup>, իսկ Հայասայի հիշատակությամբ վերջին տեքստը<sup>7</sup> հայտնի է Թուդխալիյաս IV-ի ժամանակաշրջանից (Ք.ա. 1237-1209 թթ.):

Հայասական դիցարանի վերաբերյալ սկզբնաղբյուրները պահպանվել են Ք.ա. XV-XIII դդ. խեթական սեպագիր տեքստերում: Գրանցից ամենակարևորը Ք.ա. XIV դ. թվագրվող Խեթական պետության և Հայասայի միջև կնքված պայմանագրի բեկորն է, որում ներկայացված է պայմանագրին վկա աստվածների ցանկ՝ երկու կողմերից<sup>8</sup>:

Հայասերեն լեզվի մասին մենք պատկերացում կարող ենք կազմել վերոնշյալ սկզբաղբյուրներից, որոնցում պահպանվել են հայասական տեղանուններ, անձնանուններ և դիցանուններ:

Հայկական լեռնաշխարհի Ք.ա. XIII-XII դարերի ռազմաքաղաքական

---

<sup>1</sup> KUB XXIII 72.

<sup>2</sup> KBo XVI 45; CTH 832. Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004, էջ 128:

<sup>3</sup> Güterbock H.G., The Deeds of Suppiluliuma as told by his Son, Mursili II, JCS, 1956, N 10/2-4, p. 41-68, 75-98, 107-130.

<sup>4</sup> Friedrich J., Der Vertrag des Suppiluliumas mit Hukkanas und den Leuten von Hayaša, Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, S. 103-163.

<sup>5</sup> BoTU II, S. 48-63 (A.Goetze, Die Annalen des Mursilis, MVAG, 1933, N 38, CTH 61), Գազարյան Ռ., Մուրսիլիա II-ի «Տասնանյա» տարեգրությունը, Երևան, 2013:

<sup>6</sup> KBo VI 28.

<sup>7</sup> KUB XXVI 12 11 12-15.

<sup>8</sup> KUB XXVI 39. Քոսյան Ա., Հայասայի աստվածները (KUB XXVI 39), ՄՄԱԵԺ, XXIV, Երևան, 2005, էջ 444-457:

իրադրության մասին կարևոր տեղեկություններ են պարունակում այդ ժամանակաշրջանի ասորեստանյան սեպագիր արձանագրությունները, որոնցում հիշատակված Նաիրյան երկրների տարածքն իր մեջ մերառում է խեթական աղբյուրներում հիշատակվող Հայասս և Ազգի քաղաքական կազմավորումների զբաղեցրած տարածքը: Նաիրյան երկրանվան առաջին հիշատակությամբ ասորեստանյան տեքստն է Թիկուլթի-Նիմուրտա I-ի (Ք.ա. 1233-1197 թթ.) ժամանակաշրջանին վերաբերող արձանագրությունը<sup>9</sup>: Հարկ է նշել նաև Ասորեստանի թագավոր Թիզլաթպալասար I-ի (Ք.ա. 1114-1076 թթ.) ժամանակաշրջանի սեպագիր արձանագրությունները<sup>10</sup>:

Ատենախոսության թեմային առնչվող հետազոտությունները և վերլուծական գրականությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբի ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում են Հայասայի քաղաքական պատմությանը, լեզվին և հայասական դիցարանին: Երկրորդ խմբում կարելի է ընդգրկել խեթական և հայկական առասպելաբանություններին և նրանց փոխառնչություններին նվիրված ուսումնասիրությունները, իսկ երրորդ խումբը կազմում են հայոց լեզվին և խեթալուվիական լեզուներին ու նրանց փոխառնչություններին վերաբերող աշխատությունները:

Հայասայի քաղաքական պատմության վերաբերյալ կարևոր և համապարփակ ուսումնասիրություններ են Գ. Ղափանցյանի աշխատությունները, որոնք մեզ համար նաև աղբյուրագիտական նշանակություն ունեն: Այս առումով մասնավորապես պետք է նշել Հայասային նվիրված նրա հիմնարար աշխատությունը<sup>11</sup>: Տվյալ բնագավառի ուսումնասիրության համար մեծ կարևորություն են ներկայացնում Ն. Մարտիրոսյանի աշխատությունները<sup>12</sup>: Արժեքավոր է Ն. Ադոնցի «Հայաստանի պատմություն» մենագրությունը<sup>13</sup>, որում անդրադարձ է կատարվել Հայասայի քաղաքական պատմությանը: Կարևոր է նաև Հ. Մանանդյանի ուսումնասիրությունը<sup>14</sup>, որում դիտարկումներ կան Հայասայի տեղադրության առումով: Դրանք ժամանակին տարբերվում էին առավել տարածված տեսակետներից, սակայն այսօր խիստ արդիական են դարձել և վերաիմաստավորվել ու վերագնահատվել են Ա. Քոսյանի և Ռ. Ղազարյանի կողմից: Հայասայի պատմության, տեղադրության հարցերին անդրադարձել են

---

<sup>9</sup> Տեքստի հրատարակությունը տես` Grayson A., RIMA (The Royal Inscriptions of Mesopotamia. Assyrian Periods), vol. I, 1987, A.O. 78.1.

<sup>10</sup> ДВИИУ, 10 (IV, 43).

<sup>11</sup> Капанцян Г., Хайаса - колыбель армян, Ереван, 1948.

<sup>12</sup> Մարտիրոսյան Ն., Հայերենի յարաբերութիւնը հեթոթերէնի հետ, Հանդէս ամսօրեայ, 1924, թիւ 9-10, էջ 453- 459: Նույնի, Գիլգամէշ դյուցազներգությունը, ՊԲՀ, 1958, 3, էջ 75-83: Նույնի, Պրպտումներ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ, 1961, (3-4), էջ 82-107: Նույնի, Նպաստ մը հեթ և հայ բառաբնության, ՊԲՀ, 1972, 2, էջ 163-186:

<sup>13</sup> Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972:

<sup>14</sup> Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում, Երևան, Ռ-ՁԽԳ (1944):

նան Լ. Բարսեղյանը<sup>15</sup> և Ս. Երեմյանը<sup>16</sup>. վերջինս հայ ժողովրդի ձևավորման գործընթացի ամենավաղ և հիմնական փուլերից մեկը համարում է հայասական շրջանը: Հայասայի քաղաքական պատմության ուսումնասիրության մեջ մեծ ներդրում են Վ. Խաչատրյանի ուսումնասիրությունները, որոնք ամփոփվել են «Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում» աշխատության մեջ<sup>17</sup>: Նշված հարցի վերաբերյալ կարևոր են նորահայտ սկզբնաղբյուրների օգտագործմամբ և արդիական մոտեցումներով հագեցած Ա. Քոսյանի աշխատությունները, որոնք աչքի են ընկնում նաև Հայկական լեռնաշխարհի երկրների հետ Խեթական տերության ունեցած փոխառնչությունների նորովի մեկնաբանություններով<sup>18</sup>: Այս բնագավառում ամենաթարմ խոսքն ասել է Ռ. Ղազարյանը, որի մենագրության մեջ համապարփակ կերպով ներկայացված են Հայասայի ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային պատմությունը և որն աչքի է ընկնում նոր նյութերի, նոր աղբյուրների, այդ թվում նաև հնագիտական, օգտագործմամբ<sup>19</sup>: Շատ կարևոր է նաև Ռ. Ղազարյանի կողմից Մուրսիլիս II-ի տարեգրությունների հայերեն լեզվով հրատարակումը, որը սկզբնաղբյուր է Հայասայի պատմության ուսումնասիրության համար<sup>20</sup>:

Օտար հեղինակներից մասնավորապես պետք է նշել Յ. Ֆրիդրիխի հրատարակած Խաթթիի արքա Սուպիլիուլիումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև պայմանագրի գիտական հրատարակությունը<sup>21</sup>: Հայասայի տեղորոշման հարցերին անդրադարձել է Ա. Գյոթցեն, որի ուսումնասիրությունները գիտական մեծ արժեք են ներկայացնում<sup>22</sup>:

<sup>15</sup> Բարսեղյան Լ., Խայասա-Ազգիի ու նրա մի քանի բնակավայրերի տեղադրման հարցի շուրջ, ՊԲՀ, 1963, 3, էջ 307-313: Նույնի, Հայասա-Ազգիի ռազմա-քաղաքական պատմությունից, Տեղակագիր հասարակական գիտությունների, Երևան, 1964, թիվ 7, էջ 73-79:

<sup>16</sup> Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970, 2, էջ 27-56:

<sup>17</sup> Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա XV-VII դդ., Երևան, 1998:

<sup>18</sup> Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարերի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999: Նույնի, Նոր նյութեր խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, ՍՍԱԵԺ, 2001, XX, էջ 233-245: Նույնի, Անի-Կամախը խեթական դարաշրջանում, ՊԲՀ, 2002, 3, էջ 225-241: Նույնի, Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, ՍՍԱԵԺ, 2003, XXII, էջ 252-264: Նույնի, Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004: Նույնի, Հայասա և Ազգի, «Շնորհի ի վերուստ», հոդվածների ժողովածու նվիրված Մարգիս Հարությունյանի 80-ամյակին, Երևան, 2008, էջ 263-291: Նույնի, Վանից մինչև Տիգրատ (հայոց վաղ պետականության ակունքներում), Միջազգային գիտաժողով, Հայկագունիներ, առասպել և պատմություն, գեկուցումների դրույթներ, Երևան, 2012, էջ 24-27:

<sup>19</sup> Ղազարյան Ռ., Հայասա. քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, 2009:

<sup>20</sup> Ղազարյան Ռ., Մուրսիլիս II-ի «Տասնամյա տարեգրությունը», հ. I, Երևան, 2013:

<sup>21</sup> Friedrich J., Der Vertrag des Šuppiluliumaš mit Hukkanas und den Leuten von Hayaša, Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, S. 103-163.

<sup>22</sup> Gotze A., Zur Geographie des Hethiterreichs, Kleinasatische Forschungen, 1930, B. 1, S. 108-114: Նույնի, Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, N38. CTH 61.



Հայասայի պատմության համար կարևոր են նաև Է. Կավենյակի աշխատությունները և խեթական աղբյուրների վերահրատարակությունները, ինչպես նաև, խեթական տերության պատմական աշխարհագրությանը վերաբերող Ֆ. Կռնելիուսի աշխատությունները<sup>23</sup>: Պակաս կարևոր չեն այս հարցի վերաբերյալ Ջ. Մելլարտի<sup>24</sup> և Ֆ. Հաակի<sup>25</sup> ուսումնասիրությունները: Հայասայի պատմության և էթնիկ պատկանելության հարցերը, ինչպես նաև, այս խնդիրների վերաբերյալ Գ. Ղափանցյանի տեսակետները քննարկել է Ի. Գյակոնովը<sup>26</sup>: Հայասերեն լեզվին և հայասական դիցարանին հիմնականում անդրադարձել են հայ հեղինակները, որոնցից, մասնավորապես, պետք է նշենք դարձյալ Գ. Ղափանցյանի ուսումնասիրությունները<sup>27</sup>, Ն. Մարտիրոսյանի վերոնշյալ աշխատությունները: Հայասերեն լեզվի դասակարգման, հայասական դիցանունների, անձանունների և տեղանունների ստուգաբանման հարցում Գ. Ղափանցյանից հետո հիմնարար են Գ. Ջահուկյանի մեծարժեք աշխատությունները<sup>28</sup>: Հայասական դիցարանի հարցերին անդրադարձած հեղինակներից պետք է նշել Գ. Վարդույանի ուսումնասիրությունը<sup>29</sup> և Ս. Պետրոսյանի աշխատությունը, որում հայասական դիցարանի գլխավոր եռյակը դիտարկվել է Ժ. Գյումեզլի վերականգնած հնդեվրոպական եռաֆունկցիոնալ համակարգի համատեքստում<sup>30</sup>: Հայկական և հայասական դիցարանների ժառանգականությանը և ընդհանրություններին, վերջինիս կառուցվածքային առանձնահատկություններին անդրադարձած հեղինակներից հատկապես պետք է նշել Ա. Պետրոսյանի կարևոր

<sup>23</sup> Cornelius F., Zur hethitiscen Geographie: die Nachbarn des Hethiterreiches, RHA 62, 1958, S.1-17. Նույնի, Neue Arbeiten zur Hethitischen Geographie, Anatolica 1, 1967, S. 62-77:

<sup>24</sup> Mellaart J., Anatolian Trade with Europe and Anatolian Geography and Culture Provinces in the Late Bronze Age, AnSt XVIII, 1968, pp.187-202.

<sup>25</sup> Haas V., Die ältesten Nachrichten zur Geschichte des armenischen Hochlands, XENIA, Das Reich Urartu, B. 1, Konstanz, 1985, S. 21-30.

<sup>26</sup> Дьяконов И., Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 г. до н.э. Хурриты, лувийцы, протоармяне, Ереван, 1968.

<sup>27</sup> Капанцян Г., К происхождению грузинского национального имени Kharthveli, ИЛР, т. II, Ереван, 1975, с. 45-52. Նույնի, Историко-лингвистические работы (ИЛР), т. I, Ереван, 1957: Նույնի, Общие элементы между хеттским и армянским языками, ИЛР, т. I, Ереван, 1957, с. 331-408.

<sup>28</sup> Jahukyan G., The Hayasa Language and its Relation to Indo-European Languages, ArOr, 29/3, 1961, pp. 398-405. Ջահուկյան Գ., Հայասայի լեզվի հիմնատոյիական ծագման վարկածը, ՊԲՀ, 1976 (1), էջ 89-110: Նույնի, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, 1987, էջ 322-341: Նույնի, О соотношении хайасского и армянского языков, ИФЖ, 1988, 1, с. 60-79. Նույնի, О соотношении хайасского и армянского языков, ИФЖ, 1988, 2, с. 68-88. Նույնի, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964.

<sup>29</sup> Вардумян Г., Дохристианские культы армян, Армянская этнография и фольклор. Материалы и исследования, 18, 1991, с. 65-70.

<sup>30</sup> Պետրոսյան Ս., Գասերը և եռաֆունկցիոնալ դիտարկումները հին ու վաղմիջնադարյան Հայաստանում, Պատմական գիտությունների դոկտորի ատենախոսություն, Երևան, 2001, էջ 91-127:

ուսումնասիրությունները, որոնք աչքի են ընկնում ժամանակակից մոտեցումներով և նորագույն գրականության կիրառմամբ<sup>31</sup>: Հայաստանի դիցարանի ուսումնասիրության առումով աղբյուրագիտական կարևոր արժեք ունի Ա. Քոսյանի կողմից հայաստանի աստվածների ցանկը պարունակող խեթահայաստանական դաշնագրի հայերեն լեզվով, մի շարք ճշգրտումներով և մեկնաբանություններով հրատարակությունը<sup>32</sup>:

Խեթական առասպելաբանության և դիցարանի հարցերին անդրադարձած հեղինակներից հատկապես կարելի է նշել Ա. Գյոթցեի, Է. Լառոշի, Օ. Գրնիի, Գ. Բեքմանի, Վ. Իվանովի, Վ. Արժինբայի, Հ. Հոֆների, Վ. Հասգի, Պ. Տարաչայի և այլոց աշխատությունները<sup>33</sup>: Հայ առասպելաբանության ուսումնասիրության վերաբերյալ ատենախոսության մեջ կիրառված կարևոր աղբյուրներ են Մովսես Խորենացու և Ագաթանգեղոսի երկերը, Վ. Ալիշանի, Ա. Մատիկյանի, Մ. Աբելյանի, Ն. Ադոնցի, Ս. Հարությունյանի, Ա. Պետրոսյանի աշխատությունները<sup>34</sup>: Խեթահայկական ծիսա-առասպելաբանական փոխառնչությունների առումով խիստ կարևոր են Գ. Ղափանցյանի<sup>35</sup>, Ա. Պետրոսյանի և Ս. Հարությունյանի վերոնշյալ

---

<sup>31</sup> Պետրոսյան Ա., Հայկական դիցարանի հնագույն ակունքները, ՊԲՀ, 2004 (2): Նույնի State Pantheon of Greater Armenia, Aramazd Armenian Journal of Near-Eastern Studies, vol. II, 2007, էջ 189-101.

<sup>32</sup> Քոսյան Ա., Հայաստանի աստվածները (KUB XXVI 39), ՄՄԱԵԺ, XXIV, Երևան, 2005, էջ 444-457:

<sup>33</sup> A. Götz, Kleinasien, München, 1957, S. 130-171. E.Laroche, Textes mythologiques hittites en transcription, RHA, Paris, 1965, p. 63-176. Gurney O., Some Aspects of Hittite Religion, Oxford, 1977. Beckman G., The Anatolian Myths of Illuyanka, JANES, 14, 1982, pp. 11-25. Նույնի, Myth of Illuyanka, Biblical Archaeologist, June/September, 1989, p. 104-108. Иванов В., Луна, упавшая с неба, Москва, 1977. Арзинья В., Ритуалы и мифы Древней Анатолии, Москва, 1982. Hittite Myths, translated by H.Hoffner, Jr, edited by G. Beckman, Atlanta, Georgia, 1990. Haas V., Geschichte der hethitischen Religion, Leiden, 1994. Taracha P., Religions of Second Millennium Anatolia, Wiesbaden, 2009.

<sup>34</sup> Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, «Հայաստան»: Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983: Աբելյան Մ., Երկեր, հ. Ա., Երևան, 1966: Ադոնց Ն., Երկեր, հ. Ա, «Հին հայոց աշխարհայացքը», Երևան, 2006: Ալիշան Վ., Հին Հատար կամ հեթանոսական կրօնը Հայոց, Վենետիկ-Ս.Ղազար, 1910: Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000: Մատիկյան Ա., Կրոնի ծագումը և դիցաբանությունը ըստ համեմատական կրոնագիտության, Վիեննա, 1920: Պետրոսյան Ա., Հայկական դիցարանի հնագույն ակունքները, ՊԲՀ, 2004 (2), էջ 221-225 : Նույնի, Հայկական Էպոսի հնագույն ակունքները, Երևան, 1997: Նույնի, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգամազման խնդիրը, Երևան, 1997: Նույնի, Армянский эпос и мифология, Ереван, 2002.

<sup>35</sup> Капанця Г., Хеттские боги у армян, Ереван, 1940.

աշխատությունները, Վ. Խաչատրյանի ուսումնասիրությունները<sup>36</sup>. այդ հարցերում իր դրոշ ներդրումն ունի նաև առենախոսը<sup>37</sup>:

Խեթահայկական լեզվական փոխառնչություններին նվիրված աշխատություններից խիստ կարևոր են և ժամանակագրորեն առաջիններից մեկն են Գ. Ղափանցյանի ուսումնասիրությունները<sup>38</sup>, որոնց հայագիտության մեջ նախորդել են Ն. Մարտիրոսյանի ոչ պակաս կարևոր խեթահայկական բառային գուգադիպումներին վերաբերող հոդվածները<sup>39</sup>: Նշված բնագավառում անգնահատելի են Գ. Ջահուկյանի հիմնարար աշխատությունները, ով վերանայել իր ժամանակի գիտության տվյալների լույսի ներքո մանրամասն քննարկել է մինչև իրեն գիտության մեջ շրջանառված խեթահայկական գուգահեռները, ընդրտել դասակարգել և լեզվաբանության տարբեր տեսանկյուններից վնասակել է հավաքված նյութերը<sup>40</sup>: Այս բնագավառում խիստ կարևոր են նաև Ն. Սկրտչյանի և Ա. Քոսյանի ուսումնասիրությունները, որոնք հարստացրին խեթահայկական գուգահեռների վերաբերյալ եղած տվյալները<sup>41</sup>: Օտար հեղինակներից այս

<sup>36</sup> Խաչատրյան Վ., Խեթա-հայկական դիցարանական ընդհանրություններ, ԼՀԳ, Երևան, 1967, (8), էջ 71-88:

<sup>37</sup> Հմայակյան Հ., Հեթատ աստվածուհին հայկական և հունական դիցարաններում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXII, , Երևան, 2003, էջ 210-216: Նույնի, Արևապատկությունը Վանա լճի ավազանում, Մերձավոր Արևելք, Երևան, 2008, էջ 93-98: Նույնի, Խուռիական <sup>d</sup>Ša(w)uš(k)a աստվածուհու անվան և կերպարի դրսևորումները հայկական առասպելական և լեզվական նյութերում, ՄՄԱԵԺ, հ. XVIII, Երևան, 2011, էջ 239-252: Նույնի, Խեթական Խասամիլի աստծու կերպարի շուրջ, Հնագույն Հայաստանի հոգևոր մշակույթը գիտաժողովի նյութեր, Երևան, 2011, (տպագրության մեջ): Նույնի, Արևապատկության անշվող որոշ ընդհանրությունների շուրջ խեթական և հայկական հավատալիքներում, միջազգային գիտաժողով՝ նվիրված ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ծննդյան 125-ամյակին, գեկուցումներ դրոյթներ, Երևան, 2012, էջ 54-57: Նույնի, Տուրուբերան տեղանունը խեթա-հայկական փոխառնչությունների համատեքստում, միջազգային գիտաժողով, Հայկագումիներ, առասպել և պատմություն, գեկուցումների դրոյթներ, Երևան, 2012, էջ 80-82:

<sup>38</sup> Капанцян Г., Общие элементы между хеттским и армянским языками, ИЛР, т. I, Ереван, 1957. с. 331-408.

<sup>39</sup> Մարտիրոսյան Ն., Հայերենի յարաբերութիւնը հեթիդերենի հետ, Հանդես ամսօրեայ, 1924, թիւ 9-10, էջ 453-459: Նույնի, Պրպտումներ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ, 1961, (3-4), էջ 82-107: Նույնի, Նպաստ մը հեթ և հայ բառաբանության, ՊԲՀ, 1972, 2, էջ 163-186:

<sup>40</sup> Ջահուկյան Գ., Հայերենի և խեթա-լուվիական լեզուների բառային կազմի ծագումնային գուգադիպումները, ՊԲՀ, 1967 (4), էջ 57-74: Նույնի, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970: Նույնի, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, 1987, էջ 311-321: Նույնի, О контактах армянского и хетто-лувийских языков, Мировая культура. Традиции и современность, М., 1991.

<sup>41</sup> Սկրտչյան Ն., Խեթա-հայկական մի քանի բառային ընդհանրություններ, ՊԲՀ, 1969, (1), էջ 238-246: Նույնի, Խեթա-հայկական ընդհանրություններ, ԼՀԳ, 1970, 7, էջ 59-60: Kossian A., An Anatolian-Armenian Parallel, AAL, vol. 15, 1994, p.63-65 ; Նույնի, A Note on Anatolian-Armenian Linguistic Contacts, AAL, vol. 19, 1998, p. 41-42.

հարցով զբաղվել են մի շարք մասնագետներ, որոնց ուսումնասիրություններում առկա են խեթահայկական ուշագրավ գուգադրումներ: Մասնավորապես պետք է նշել Ջ. Գրեյխին աշխատությունները, որոնք աչքի են ընկնում մաս ընդհանրապես խեթահայկական փոխառնությունների վիճահարույց հարցի վերաբերյալ օբյեկտիվ մոտեցումներով, ինչը էական է այս խրթին խնդրի լուսաբանման հարցում<sup>42</sup>: Շատ կարևոր են մաս Շուլտհայսի, Պուիլելի և այլոց ուսումնասիրությունները<sup>43</sup>:

### **Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (որոնք իրենց հերթին բաժանվում են ինը ենթագլուխների), եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը և գիտական նորույթը, ներկայացվում են հիմնական նպատակներն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը և թեմայի ժամանակագրական սահմանների ընտրությունը, տրվում է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը՝ «**ՀԱՅՈՑ ԱԶԳԱՇԱԳՄԱՆ ՀԱՅԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԿԱՇԸ ԸՍՏ Գ. ՂԱՓՆՑՑԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**» բաժանվում է չորս ենթագլխի:

Առաջին ենթագլխում, որը վերնագրված է «**Հայասա-Ազգին ըստ Գ. Ղափանցյանի աշխատությունների**», համառոտ կերպով ներկայացվում են Հայասա և Ազգի քաղաքական միավորների հիշատակությամբ Ք.ա. XV-XIII դդ. խեթական սեպագիր տեքստերը, ինչպես մաս, Հայկական լեռնաշխարհի քաղաքական իրադրության վերաբերյալ կարևոր տեղեկություններ պարունակող Ք.ա. XIII-XII դդ. ասորեստանյան աղբյուրները:

Վերոնշյալ սեպագիր աղբյուրների հիման վրա մի շարք հայ և օտարազգի մասնագետներ ուսումնասիրել են Հայասայի ռազմաքաղաքական և լեզվամշակութային պատմությունը: Այս հարցերը գիտության մեջ

---

<sup>42</sup> Գրեյխն Ջ., Խեթա-հայկական մի գուգաեռ, ՊԲՀ, 1972 (3), էջ 221-222: Նույնի, A Note on Hittite TARLÁ, RHA, tome XXXIII, 1975, pp. 55-57: Նույնի, Luwian Elements in Armenian, Древний Восток, III, Ереван, 1978, pp. 115-126. Նույնի, The Anatolian Substrata in Armenian - An Interim Report, AAL, vol. 3, 1982, 3, pp. 65-72. Նույնի, A Note on Armenian Zurna, Folia Orientalia, Tome XXVII, 1990, pp. 185-198. Նույնի, Book review, Jaan Puhvel, Hittite Etymological Dictionary, vol.3, Words beginning with H, Berlin, 1991, AAL, vol. 13, 1992, pp. 85-90. Նույնի, Kurilovicz and Hittite h, and further extensions on to Armenian, Analecta Indoeuropea Cracovensia, Vol. II: Kurlowica Memorial Volume, Part. 1, Cracov, 1995, pp. 313-315

<sup>43</sup> Schultheiss T., Hetitisch und Armenisch, Kuhns Zeitschrift für Vergleichende Sprachforschung KZ, 77, 1961, p.77-220. Puhvel J., Reed and Arrow in Anatolia and beyond, AJNES, Vol. II, 2007, p. 85-87. Van Windekens A.J., Quelques confrontations lexicales arméno-hittites, AAL, vol. 1, 1980, p 39-43.

առաջիններից մեկը արժարժել է Գ.Ղափանցյանը, որի ուսումնասիրություններն ամփոփվել են «Հայասան հայերի բնօրրան» հիմնարար աշխատության մեջ:

Հայասայի և Ազգի տեղադրության վերաբերյալ արտահայտված տեսակետները կարելի է բաժանել մի քանի հիմնական խմբի.

ա) Վերին Եփրատի, Վերին Գայլ և Ճորոխ գետերի ավազաններում՝ ներառյալ Բարձր Հայքի ու Փոքր Հայքի տարածքները (Ն. Մարտիրոսյան, Ա. Գյոթցե, Է. Կավենյակ, Ֆ. Հաազ, Ջ. Յաքար, Ն. Աղոնց, Լ. Բարսեղյան, Ս. Երենյան)

բ) Սև ծովի ափին (Ֆ. Կոռնելիուս, Ի. Դյակոնով)

գ) Հայկական լեռնաշխարհի հյուսիսում և արևմուտքում՝ ընդգրկելով Արևմտյան Հայաստանի մեծ մասը (Է. Ֆոռեր, Յ. Ֆրիդրիխ, Ա. Խաչատրյան, Վ. Խաչատրյան, Ջ. Մելլարտ):

դ) Վանա լճի հյուսիսային և արևմտյան կողմերում (Հ. Մանանդյան) կամ, ըստ Ա. Քոսյանի վերջին շրջանում արտահայտած տեսակետի, Հայասա ու Ազգի երկմիասնական պետությունը տեղադրվում է Վանա լճի և Խարբերդի դաշտի միջև ընկած շրջանում՝ ներառյալ Արածանիի հյուսիսային ափերը: Նման տեսակետ է հայտնել նաև Ռ. Ղազարյանը, ըստ որի Հայասան գտնվել է Բարձր Հայքում՝ իր մեջ ներառելով Տուրուբերան նահանգը:

Իսկ հայասերեն լեզվի և հայերենի փոխհարաբերությունների մասին գիտության մեջ արտահայտված տեսակետները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի. ա) հայասերենը հայերենի հիմքն է (Գ. Ղափանցյան), բ) հայասերենը հայերեն չէ, այլ հիմնականում ունի խառնակական բնույթ (Ի. Դյակոնով, Վ. Բենեցյանու) գ) հայասերենը հայերենի ամմիջական հիմքը չէ, այլ նրանից տարբեր հնդեվրոպական լեզու, որը ցեղակից է խեթալուվիական լեզուներին և հանդես է գալիս որպես ենթաշերտ հայերենի մեջ (Գ. Ջահուկյան), սակայն հետագայում նույն հեղինակը հայասերենը համարել է վաղնջահայերեն:

Այս ենթազվխում առավել մանրամասն անդրադարձ է կատարվել Հայասայի և նրա բնակավայրերի դափանցյանական տեղադրություններին և դրանց ստուգաբանություններին, որոնք քննարկվել են արդի գիտության լույսի ներքո: Ըստ Գ.Ղափանցյանի Հայասան զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասը՝ Ճորոխ, Եփրատ և Արաքս գետերի վերին հոսանքի շրջանները՝ ներառելով իր մեջ Փոքր Հայքի արևելյան տարածքներն ու Բարձր Հայքը: Հայասան Գ. Ղափանցյանը համարել է հայոց բնօրրանը, որն արևմուտքում սահմանակցել է խեթական տարածքներին:

Հատուկ ուշադրություն է դարձվել նաև հայասական տեղանվանակերտ վերջածանցների վերաբերյալ Գ. Ղափանցյանի և այլոց տեսակետների քննարկմանը: Այդ վերջածանցները համեմատվել են խեթալուվիական և խուռաուրարտական տեղանվանակերտ մասնիկների հետ, ինչը հնարավորություն է տվել հանգել որոշ նախնական եզրահանգումների, ըստ որոնց՝ հայասական տեղանուններում գերակշռում են խեթալուվիական լեզվական տարրերը:

Երկրորդ՝ «Հայաստան անձնանունների ստուգաբանությունը ըստ Գ. Ղափանցյանի աշխատությունների» ենթազվխում մանրամասն անդրադարձ է կատարվում մեզ հասած հայաստան հինգ անձնանունների (Anniya, Hukkana, Karanni, Mariya, Mutti) ղափանցյանական ստուգաբանություններին: Ներկայացվում է քննարկվում են այլ հեղինակների տեսակետներ և, ինչի արդյունքում էլ եզրակացվում է, որ հայաստան անձնանուններում հիմնականում գերակշռում են խեթալուվիական արմատներն ու բառակազմական տարրերը:

Երրորդ ենթազվխը, որը վերնագրված է «Հայաստան դիցանունները ըստ Գ. Ղափանցյանի աշխատությունների», մանրամասն քննարկվում են հայաստան դիցարանի կառուցվածքի և դիցանունների ստուգաբանության վերաբերյալ Գ. Ղափանցյանի արտահայտած տեսակետները:

Հայաստան դիցանունների ստուգաբանությամբ և դրանց պաշտամունքին առնչվող հարցերով զբաղվել են մի շարք այլ գիտնականներ և, ովքեր կատարելով համակողմանի ուսումնասիրություններ՝ հանգել են ուշագրավ եզրակացությունների, որոնք, ամենայն մանրամասնությամբ և Գ. Ղափանցյանի տեսակետների հետ համադրմամբ, ներկայացված են դիտարկվող ենթազվխում:

Հայաստան դիցարանի վերաբերյալ սկզբնաղբյուրները պահպանվել են Ք.ա. XV-XIII դդ. խեթական սեպագիր տեքստերում, որոնցից ամենակարևորը Ք.ա. XIV դ. թվագրվող Խեթական պետության և Հայաստաի միջև կնքված պայմանագրի բեկորն է, որում ներկայացված է պայմանագրին վկա աստվածների ցանկ՝ երկու կողմերից: Հայաստան կողմից ներկայացված են 14 աստվածություններ, որոնցից առաջին երկուսը՝ <sup>d</sup>U.GUR (անդրաշխարհի տիրակալ աքքադական Ներգալի գաղափարագիրն է) և <sup>d</sup>ISTAR (սիրո և պտղաբերության աստվածուհի, շումերական <sup>d</sup>INANNA-յի աքքադական համապատասխանությունն է), առանձնացված են մյուսներից, որը ըստ ուսումնասիրողների, մատնանշել է նրանց գերակա դերը Հայաստաի դիցարանում: Դիցանունները ներկայացված են ըստ պաշտամունքի վայրերի, իսկ նրանցից երկուսի՝ գաղափարագրով գրված ամպրոպի աստված <sup>d</sup>U և <sup>d</sup>Unagastas անվանումները կրկնվում են մի քանի անգամ և վկայված են տարբեր քաղաքներում:

Գ. Ղափանցյանը հայաստան դիցարանը գլխավորող <sup>d</sup>U.GUR աքքադական անդրաշխարհի Ներգալ աստծո գաղափարագրով հանդես եկող աստվածության տակ տեսնում է հայոց Արա Գեղեցիկ մեռնող-հարություն առնող աստվածությանը՝ հիմնավորելով իր տեսակետն այն հանգամանքով, որ այդ տիպի աստվածությունները երբեմն դառնում են նաև անդրաշխարհի տերեր, ինչպես եգիպտական Օսիրիսը: Մենք փորձել ենք առավել հիմնավորել Ղափանցյանի տեսակետը և ցույց տվել, որ Արա Գեղեցիկը բազմաբնույթ և բարդ դիցաբանական կերպար է՝ օժտված դիցարանի գլխավոր աստծուն բնորոշ մի շարք հատկանիշներով, ինչպես նաև, անդրաշխարհին առնչվող շեշտված գործառույթներով, ինչը հնարավորություն է տալիս ենթադրել, որ նրա նախատիպը կարող էր ներկայանալ վերոնշյալ U.GUR գաղափարագրով:

Մանրամասն քննարկվել են նաև այլ հեղինակների տեսակետները, որոնք վերաբերում են հայասական դիցանունների ստուգաբանություններին, գործառնություններին և դիցարանի կառուցվածքին: Բացի այդ, Գ. Ղափանցյանը իրավացիորեն նշում է, որ հեթանոսական ժամանակաշրջանի մեր գլխավոր պաշտամունքային կենտրոնները տեղակայված էին Բարձր Հայքում և հարակից տարածքներում, որտեղ, ըստ ուսումնասիրողների մեծ մասի, տեղադրվում է Հայասան: Ըստ էության, Գ. Ղափանցյանը ակնհայտ ժառանգականություն է տեսնում հայասական և հայկական դիցարանների միջև: Տեսակետ, որ հետագայում զարգացվել է այլ մասնագետների, այդ թվում, և ատենախոսի կողմից:

Չորրորդ՝ **«Հայոց ազգածագման հարցերը ըստ Գ. Ղափանցյանի աշխատությունների»** ենթագլխում ներկայացվում է Ղափանցյանի տեսակետը հայոց ազգածագման բարդ գործընթացի վերաբերյալ, որում գլխավոր դերը հատկացվում է Հայասա պետությանն ու հայասերեն լեզվին: Հայոց ազգածագման հայասական վարկածը ամենաքննարկվածն ու շրջանառվածն է գիտության մեջ և ունի բազում հետևորդներ: Այս վարկածի ճշմարտացիության մասին կարող են վկայել հետևյալ փաստերը. Հայասա պետության անվանումը ակնհայտորեն հիշեցնում է «հայ» էթնոնիմը, Հայասան տեղադրվում է Հայկական լեռնաշխարհում, ըստ առավել տարածված տեսակետների՝ Բարձր Հայքում և հարակից տարածքներում: Այս տեղադրության դեպքում ևս մի լուրջ կռիվ է ի հայտ գալիս. հայոց հեթանոսական աստվածների հին պաշտամունքավայրերը տեղակայված էին այս տարածքներում, ինչը որոշակի հոգևոր-մշակութային ժառանգականություն է ենթադրում հայկական և հայասական հավատալիքներում: Ինչ վերաբերում է լեզվի դասակարգմանը, ապա չնայած գիտության մեջ առկա տեսակետներին, մեր խորին համոզմամբ, նրանցից ցանկացածը խիստ վարկածային պետք է համարել, քանզի միայն հատուկ անունների հիման վրա արված եզրակացությունները չեն կարող լիարժեքորեն լուծել որևէ լեզվի դասակարգման խնդիրը:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է **«ՆՆԵԹԱՀԱՅԿԱԿԱՆ ԾԻՍԱ-ԱՈՍՊԹԵԼԱԲԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՆՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** և բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին՝ **«Խեթական և հայկական առասպելաբանությունների առանձնահատկությունները»** ենթագլխում ընդհանրական կերպով ներկայացված են խեթական և հայկական դիցարաններին և առասպելաբանություններին բնորոշ առանձնահատկությունները: Հատկանշական է, որ թե խեթական, թե հայկական հոգևոր մշակույթը շատ բազմաշերտ է ու բազմաբնույթ: Հայկական առասպելաբանության և հոգևոր հավատալիքային համակարգում առկա են հնդեվրոպական, խաթախեթական, խուռիական, սեմական, կովկասյան, հունական, ինչպես նաև իրանական ազդեցություններ: Խեթական առասպելաբանությունը ևս սինկրետիկ բնույթ ունի. այն ներառում է բուն հնդեվրոպական, խաթական, խուռիական, սեմական շերտեր: Այս ենթագլխում ցույց է տրվում երկու

ժողովուրդների հավատալիքներում հնդեվրոպական միասնությանը հանգող ընդհանրությունները և փորձ է արվում տիպաբաժանել խեթահայկական ծիսա-առասպելաբանական փոխառնչությունները:

Երկրորդ՝ **«Խեթահայկական ծիսա-առասպելաբանական փոխառնչությունները ըստ Գ. Ղափանցյանի աշխատությունների»** ենթագլխում անդրադարձել ենք Գ. Ղափանցյանի աշխատություններում տեղ գտած մեկնաբանություններին, որոնք քննարկել ենք արդի գիտության համատեքստում՝ ներկայացնելով նաև սեփական մի շարք դիտարկումներ և առաջադրել վարկածներ: Հարկ է նշել, որ Գ. Ղափանցյանի ուսումնասիրություններից անցել է ավելի քան կես դար, իսկ խեթագիտության համագավառում վերջին տասնամյակներում մեծ առաջընթաց է արձանագրվել և նորահայտ արձանագրությունները, նոր ընթերցումները, նորագույն փաստերի երևան գալը ոչ միշտ են ապացուցում նրա տեսակետների ճշմարտացիությունը: Սակայն, մի շարք դեպքերում էլ նրա դիպուկ և խորիմաստ դիտարկումները առ այսօր էլ պահպանում են իրենց արդիականությունը՝ հիմք հանդիսանալով տվյալ նյութի վերաբերյալ առավել փաստարկված տեսակետների ձևակերպման համար: Իր աշխատություններում նա խեթախոռոչական դիցանունների ու կերպարների գուգահեռներն է փորձել գտնել հայկական նյութերում, որոնցից ամենատուշագրավներն են հայկական Տորք դիցանվան համադրումը խեթալուվիական Tarḫu, Tarḫunt աստծո անվան և կերպարի հետ, խեթախոռոչական Hēbat դիցուհու կերպարի համադրումը հայկական Անահիտի հետ, հայերեն «աստված» բառի բխեցման հնարավորությունը խեթալուվիական Sivat դիցանունից, խեթալուվիական Masanes դիցանվան կապը հայկական Մաժանի անվան և կերպարի հետ և այլն:

Երրորդ ենթագլուխը վերնագրված է **«Խաթախեթական Տեղեպինուս աստծո մասին առասպելը ըստ Գ. Ղափանցյանի աշխատության»**: Այս ենթագլխում քննարկված է Գ. Ղափանցյանի «Об одном хеттском мифе в связи с журавлем и божеством весны» աշխատությունը: Պետք է նշել, որ Ղափանցյանը, հիմնվելով իր ժամանակ հայտնի՝ սահմանափակ նյութերի վրա, չէր կարող ճշգրիտ դիտարկումներ կատարել: Մասնավորապես, նրա ուշադրության կենտրոնում են եղել այս առասպելում ի հայտ եկող Տեղեպինուս, Կամրուսեպա դիցանունները և hēran թռչնանունը, որոնք նա համադրել է հայկական լեզվական նյութերի հետ, սակայն այդ դիտարկումներից և ոչ մեկն էլ այսօր արդիական չէ, ինչը հանգամանալից կերպով ցույց է տրվել այս ենթագլխում:

Երրորդ գլուխը վերնագրված է **«ԽԵԹՍՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՓՈՒՍԱՆՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ Գ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒՄՆԵՐԻ»**, որը բաժանված է երկու ենթագլուխների:

Առաջին ենթագլխում՝ **«Խեթահայկական լեզվական փոխառնչությունների հարցը»** մանրամասնորեն ներկայացված են Գ. Ղափանցյանի տեսակետները լեզվաբանական մի շարք խնդիրների՝ հատկապես հայոց լեզվի և խեթերենի վերաբերյալ, որոնք նա համարում էր



«ասիանիկ»: Յույց է տրված թե «ասիանիկ» տեսության, թե «խառնածին լեզուների» վերաբերյալ դափանցյալական տեսակետների սխալակամությունը, որն ապացուցված է արդի լեզվաբանության տվյալների հիման վրա: Ներկայացված է Գ. Ղափանցյանի մեծագույն ներդրումը խեթահայկական լեզվական փոխառնչությունների խնդրի վերհամման և այս հարցի վերաբերյալ կատարած ուսումնասիրությունների ու դիտարկումների առումով, որոնցից շատերը առ այսօր էլ շրջանառվում են թե հայ, թե օտար հեղինակների աշխատություններում և տեղ են գտել խեթերենի ստուգաբանական բառարաններում:

Այս հարցը խիստ խնդրահարույց է և կապված գիտության մեջ ցայսօր տարակարծություններ առաջացնող մի շարք այլ խնդիրների հետ, որոնք են՝ հնդեվրոպական մախահայրենիքի տեղադրության վայրը, խեթերի՝ Փոքր Ասիա ներթափանցման ժամանակաշրջանի որոշումը (եթե նրանք իրոք այլ վայրերից են այդտեղ տեղափոխվել), հայ ժողովրդի կազմավորման ու բնօրրանի խնդիրները և այլն: Խեթահայկական լեզվական հնարավոր փոխառնչությունների առումով քննարկվել են Ղափանցյանի և այլոց մտտեցումները, ներկայացվել են սեփական տեսակետներ:

Հաջորդ ենթազխում՝ **«Խեթահայկական բառային զուգահեռներ»** առաջին անգամ առավել ամբողջական կերպով և հստակ հղումներով մեկտեղված են Գ. Ղափանցյանի աշխատություններում տեղ գտած խեթահայկական բառային զուգահեռները: Յուրաքանչյուր զուգահեռ ներկայացված է բառ-հոդվածի տեսքով, որում քննարկված են նաև այլ հեղինակների տեսակետները, ճշգրտված են որոշ բառերի ընթերցումներն ու իմաստները, մի շարք դեպքերում ներկայացված են նաև մեր նկատառումները: Առաջին անգամ կատարված է խեթերենից հայերենին անցած բառապաշարի իմաստային խմբերի բաժանում, ինչը որոշ մախանական եզրահանգումների հնարավորություն է բնձնում:

**Եզրակացության** մեջ ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները: Ուսումնասիրելով խեթահայկական պատմամշակութային փոխառնչություններին նվիրված Գ. Ղափանցյանի ուսումնասիրությունները՝ կարող ենք կատարել հետևյալ հիմնական եզրահանգումները.

1) Գ. Ղափանցյանի և այլոց աշխատություններում տեղ գտած հայասական տեղանունների ստուգաբանությունները ցույց են տալիս, որ դրանք կազմությամբ և բառակազմիչ մասնիկներով ակնհայտորեն իրենց զուգահեռներն ունեն փոքրասիական այլ տեղանունների հետ: Եվ եթե նրանց մի մասը տեղական բնույթ ունի, ապա պետք է փաստել, որ հայասական տեղանուններում գերակշռում են փոքրասիական, խեթալուվիական տարրերը:

2) Ինչպես կարելի է եզրակացնել հայասական անձնանունների Գ. Ղափանցյանի և այլոց բերած առավել ընդունելի և հավաստի ստուգաբանություններից, նրանցում ևս հիմնականում գերակշռում են խեթալուվիական արմատներն ու բառակազմական տարրերը:

3) Ընդհանրացնելով հայասական դիցարանի վերաբերյալ Գ. Ղափանցյանի և այլ մասնագետների դիտարկումները՝ կարելի է եզրակացնել,

որ նրանցում առկա է սեմական (U.GUR, *IŠTAR*), խեթալուվիական (Karḫuḫšaš, Tarumuš) ազդեցություն, հնդեվրոպական ծագման են համարվում UnagastasUnagastasTakšanaš, Unagaštaš,Unagastas Baltaik դիցանունները, վաղնջահայկական՝ Terittitunis-ը, իսկ Sill... թերի ընթերցմամբ դիցանունը հիշեցնում է ուրարտական Silia թեոնիմը: Արդյունքում, կարելի է փաստել, որ հնդեվրոպական ստուգաբանությունները գերակշռում են մյուսների նկատմամբ:

4) Գ. Ղափանցյանի, այլ մասնագետների, այդ թվում և ատենախոսի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայկական և հայասական դիցարաններին բնորոշ են աշխարհագրական, կառուցվածքային և կերպարային ընդհանրություններ:

5) Գ. Ղափանցյանի հայոց ազգածագման «հայասական վարկածը» ամենատարածվածն ու շրջանառվածն է գիտության մեջ և ունի բազմաթիվ հետևորդներ: Այս տեսակետի ճշմարտացիությանը նպաստող կողմերն են Հայասա տեղանվան և «հայ» էթնոնիմի ակնհայտ մամուլությունը, Հայասայի՝ Հայկական լեռնաշխարհում տեղադրությունը և հայասական ու հայկական դիցարանների միջև դիտարկված հոգևոր-մշակութային ժառանգականությունը: Գ. Ղափանցյանի մի շարք դիտարկումներ՝ կապված հայասական տեղանունների, անձնանունների և դիցանունների տեղադրության և ստուգաբանության հետ շարունակում են արդիական մնալ և նոր տեսակետների հիմք հանդիսանալ: Այս ուսումնասիրությունների հիմնական թերությունն այն է, որ, առաջնորդվելով «ասիանիկ» տեսությամբ, նա հայասական լեզվական նյութը քննարկելիս իրար կողքի, առանց ընտրության, որպես փաստարկներ ներկայացնում է խեթալուվիական լեզուներից սկսած մինչև կովկասյան, խուռաուրարտական, հայերեն լեզվի տվյալներ, ինչը խոցելի է դարձնում իր առաջադրած տեսակետը: Մեծ դերակատարում ունի Գ. Ղափանցյանը նաև հայոց ազգածագման տեսությունների զարգացման առումով. ըստ էության, նրանից հետո հայոց ազգածագման հարցերին անդրադարձած մի շարք գիտնականներ (Հ. Մանանդյան, Ս. Երեմյան, Գ. Սարգսյան) հիմնականում շատ չեն հեռացել նրա տեսակետներից և ըստ նրանց էլ վաղնջահայերը Հայասայից գնացել են Մալթիայի շրջանը, ապա այնտեղից Հայաստան, ինչպես պատկերանում է նաև Գ. Ղափանցյանին Հայասա-Հայք անցումը:

6) Քանի որ Հայասայի լեզվով պահպանվել են միայն հատուկ անուններ (տեղանուններ, անձնանուններ և դիցանուններ), ապա նման նյութի հիման վրա արված ցանկացած լեզվաբանական վերլուծություն և լեզվի կամ էթնոսի դասակարգման փորձ պետք է համարել վարկածային, այնքան ժամանակ, քանի դեռ չի հայտնաբերվել հայասերեն լեզվով որևէ արձանագրություն:

7) Ելնելով խեթահայկական ծիսա-առասպելաբանական փոխառնչությունների բազմաշերտությունից՝ դրանք մենք փորձել ենք բաժանել հետևյալ տիպերի ա) տիպաբանական, բ) հնդեվրոպական միասնությունից եկող, գ) միևնույն տարածաշրջանում միմյանց հարևանությամբ բնակվելու հետևանքով առաջացած, դ) փոխառությունների և

փոխառնչությունների հետևանքով ստեղծված (միջնորդավորված և ուղղակի), ե) ենթաշերտային, գ) մակաշերտային: Այս բոլոր կետերի վերաբերյալ նյութերը դիտարկվել են ատենախոսության համապատասխան գլխում:

8) Ի մի բերելով խեթահայկական ծխա-առասպելաբանական և մշակութային փոխառնչություններին վերաբերող Գ.Ղափանցյանի ուսումնասիրությունները, կարելի է նշել նրա մի շարք ուշագրավ դիտարկումներ. խեթալուվիական Tarḫu, Tarḫu(n) աստծո և հայկական Տորքի անունների համադրումը, որը նրանից առաջ տեղ էր գտել գիտության մեջ, սակայն առավել հիմնավորվել է Գ. Ղափանցյանի կողմից: Ուշագրավ են նաև խեթական արքայուհիներից հայտնի Ara-š աստծո անվան գուգադրումը հայկական Արայի անվան ու կերպարի հետ, խեթախոտիական Hēbat աստվածուհու կերպարի համադրումը հայոց մայր դիցուհի Անահիտի հետ, հայերեն «աստված» բառի հնարավոր ստուգաբանությունը խեթալուվիական Šivat դիցանունից: Հետաքրքրական են նաև Արտաշեսի որդի Մաժանի անվան և կերպարի վերաբերյալ Գ.Ղափանցյանի դիտարկումները, ըստ որոնց, Մաժանը ներկայանում է որպես աստված, ում պատվին Նոր տարվա սկզբին համաժողովրդական տոնախմբություններ են կատարվել և որը մույնացվել է Վանատուրի հետ, իսկ անունը համադրվել է խեթալուվիական Masanes- ի հետ: Հաջորդ դիտարկումը Նար անվանումով ջրային տարերքին առնչվող դիցուհու կերպարի վերականգնումն է հայոց հավատալիքներում, ժողովրդական հավատալիքներում առկա «ճիվաղ» կոչվող հրեշների անվան և կերպարի զուգադրումը խեթական տեքստերից հայտնի, սարասփելի տեսքով zavalli կոչվող աստվածությունների հետ և այլն:

9) Խեթահայկական

ծխա-առասպելաբանական

փոխառնչություններին մվիրված Գ. Ղափանցյադի և այլոց, այդ թվում և ատենախոսի ուսումնասիրությունների արդյունքում կարելի է եզրակացնել, որ հայ առասպելաբանությունը շատ բազմաշերտ է, այն ներառում է թե հնդեվրոպական միասնության ժամանակաշրջանից եկող ավանդույթներ, թե խաթա-խեթա-լուվիական, թե սեմական, թե խուռասուրարտական, թե կովկասյան, թե հունական և իրանական: Եթե փորձենք կազմել այս շփումների և ազդեցությունների աշխարհագրությունը, ապա կգծագրվի Հայկական լեռնաշխարհը իր հյուսիսային, արևմտյան, հարավային հարևաններով, ինչը կարող է վկայել միայն այն մասին, որ հայ ժողովուրդը հնագույն ժամանակներից ի վեր բնակվել է այս տարածքներում և կենդանի շփումներ ունեցել իր հարևանների հետ: Ինչպես նշում է Ի.Ղյակնոնովը, արդեն իսկ անվիճելի փաստ է, որ հոգևոր-մշակութային և կենսաբանական առումով հայ ժողովուրդը հանդիսանում է ուղիղ կենսաբանական հետնորդն այն ժողովրդի, որ բնակվել է Հայկական լեռնաշխարհում ուշ նեոլիթից մինչև վաղ, միջին և ուշ բրոնզե դար, մինչև «հին աշխարհի» վերջը և հանդիսացել է կրողն ու շարունակողը այն բոլոր հզոր քաղաքակրթությունների, որոնք ստեղծվել են

այստեղ<sup>44</sup>: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արդեն իսկ Ք.ա. III հազարամյակից սկսած այս տարածաշրջանից հայտնաբերված կենցաղին և հոգևոր մշակույթին առնչվող հնագիտական նյութերում ուրվագծվող պատկերացումները, աշխարհընկալումը՝ տիեզերական, բնապաշտական և այլն իրենց ուղղակի արտացոլումն են գտնում հայոց բանահյուսական ավանդություններում, ծեսերում ու հավատալիքներում: Հաճախ այդ նյութերը կարող են պարզապես պատկերագարություններ հանդիսանալ ոչ միայն հայկական, այլև խեթական առասպելաբանական պատկերացումների համար, որոնք ընդհանրություններ ունեն հայկականի հետ, և այդ ընդհանրությունները երբեմն հանգում են ավելի վաղ՝ խեթական շերտին: Եվ հատկանշական է, որ այդ կենդանի հիշողությունը, որոշ դեպքերում նույնիսկ ծեսերի ձևով, պահպանվել է հայերի մոտ անգամ մինչև 20-րդ դարասկզբ և դեռ կշարունակվեր, եթե մենք չզրկվեինք մեր պատմական հայրենիքից, քանի որ շատ ծեսեր, ավանդույթներ ու հավատալիքներ ուղղակի կապված էին մեր կորցրած կոնկրետ պատմական վայրերի, տեղանքների, լեռների, գետերի, աղբյուրների և այլնի հետ:

10) Հայոց լեզվի և խեթերենի վերաբերյալ Գ. Ղափանցյանի առաջադրած տեսակետները չբռնեցին ժամանակի քննությունը, քանի որ նա առաջնորդվում էր լեզուների ծագումնաբանության «ասիանիկ» տեսությամբ, ինչը դեռևս իր կենդանության օրոք մերժվեց: Հայերենը և խեթերենը խառնածին լեզուներ չեն, այլ հնդեվրոպական լեզվաընտանիքի տարբեր ճյուղերի պատկանող լեզուներ, որոնք, չնայած տարբերություններին, ունեն նաև որոշ ընդհանրություններ՝ օրինակ հ և ք հնչյունների և այլ առումներով<sup>45</sup>: Բացի այդ, հայերենում առկա են խեթալուվիական լեզուներից արված մի քանի տասնյակ փոխառություններ, որոնք կարող են վկայել հայ և խեթալուվիական ժողովուրդների կենդանի շփումների մասին:

11) Գ. Ղափանցյանը խեթահայկական փոխառությունները բաժանում էր երկու հիմնական խմբի՝ հայասերենի միջոցով հայերենին անցած փոխառություններ, որոնք կարող են ընդհանուր լինել խեթերենի և հայասերենի համար, այսինքն, նա խեթերենը և հայասերենը համարում է գրեթե միևնույն լեզուն, և ինչպես ինքն է նշում, դրանք չեն կարող համարվել փոխառություններ, իսկ մյուս խմբում ընդգրկում էր այն փոխառությունները, որոնք կազմված են խեթերեն արմատներով և բառակազմական մասնիկներով: Այս տեսակետն այսօր անընդունելի է, քանի որ, անգամ եթե ընդունենք, որ հայասերենը վաղնջահայերենն է կամ նրա հիմքը, դարձյալ չի կարելի խոսել խեթահայկական ընդհանուր բառապաշարի մասին, քանի որ խեթերենը և հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի տարբեր ճյուղերի են պատկանում: Չնայած սխալ մեթոդաբանությանը, այսուհանդերձ, Գ. Ղափանցյանի նկատած խեթահայկական բառային զուգահեռների մի զգալի մասը գիտական է և

<sup>44</sup> И.Дьяконов, К пранстории армянского языка (о фактах, свидетельствах и логике), ИФЖ, 1983 (4), с. 149.

շրջանառվում է արդի գիտության մեջ:

12) Խեթերենից հայերենին անցած բառային փոխառությունները գիտության մեջ քննարկվել են լեզվաբանության տարբեր տեսանկյուններից՝ հնչյունաբանության, ձևաբանության, բառակազմության, ծագմամբանության, սակայն չի կատարվել այդ փոխառությունների իմաստային խմբերի բաժանում և, համապատասխանաբար, դրա վրա հիմնված եզրակացություններ:

Ատենախոսության մեջ խեթահայկական փոխառությունները բաժանել ենք մի քանի իմաստային խմբերի՝ բռնություն և իշխանություն ցույց տվող բառեր, մշակութային և տնտեսական եզրույթներ, որոնց շարքում նաև՝ արհեստագործական և երաժշտական տերմիններ, ծիսական տերմիններ, մարմնի մասեր, կենդանական և բուսական աշխարհ, դիցաբանություն և անձնանուններ: Հետաքրքրական է, որ գրեթե նման իմաստային խմբերի են բաժանվում նաև, օրինակ, իրանական փոխառությունները հայերենում, որոնք սակայն անհամեմատ ավելի մեծաքանակ են: Այս իմաստային խմբերի բաժանման վրա արվելիք վերջնական եզրակացությունները թողնելով հետագայի ավելի խոր և համակողմանի ուսումնասիրման, այսուհանդերձ, կարող ենք գալ երկու նախնական եզրահանգման. ա) խեթալուվիական ժողովուրդների մի մասը ժամանակի ընթացքում ձուլվել է հայերի մեջ՝ թողնելով հայերենի բառապաշարում մի քանի տասնյակի հասնող և մեծ մասամբ կենդանի բառապաշարում առ այսօր էլ կիրառվող բառեր և բ) հայ և խեթալուվիական ժողովուրդների շփումը՝ դատելով բառային գուգահեռների իմաստային խմբերից, եղել է Խեթական տերության գոյության պայմաններում, և հայերը գտնվել են խեթերի մշակութային, տնտեսական և քաղաքական ազդեցության ոլորտում: Այդպես մտածելու տեղիք է տալիս այն հանգամանքը, որ դիտարկվող փոխառությունների շարքում, տնտեսական, մշակութային և այլ տերմիններին գուգահեռ (բրուտ, մառան, ջնար, վարպետ, սպանդ), սուրբ կենդանի, հուռթել (կախարդել, հմայել), կօշնել (ընծայել, ձոնել), շեղջ, հնձան, ասր (բուրդ և այլն), առկա են բռնություն և իշխանություն ցույց տվող բառեր, որոնք են՝ ջախջախել, քրքրել, հատել, սպրդել, խողխողել, ոգորել (մարտնչել), խույս (խույս տալ), կշտամբել, լուծ, իշխան և այլն: Մեր կարծիքով, այս հանգամանքը ավելի շուտ կարող է վկայել ոչ թե ձուլվող, այլ իր իշխանությունը տարածող ժողովրդի մասին, ինչպիսիք էին խեթերը կայսրության շրջանում:

## ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԵՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Հայաստանի մի շարք տեղանվանական վերջավորությունները Հայկական լեռնաշխարհի այլ սեպագիր տեղանուններում, Մերձավոր Արևելք, Երևան, 2002, էջ 3-9:
2. Հեբատ աստվածուհին հայկական և հունական դիցարաններում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXII, Երևան, 2003, էջ 210-216:
3. Հայաստանի <sup>d</sup>U.GUR և Արա Գեղեցիկը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2004, XXIII, էջ 381-394:
4. Հոգևոր ավանդույթների ժառանգականությունը (Պտղաբերության պաշտամունքից մինչև քրիստոնեություն), 21-րդ դար, 2005, թիվ 2(8), էջ 165-175:
5. Սոսանվեր Անուշավանը և նրա կովկասյան ու խուռիական գուգահեռները, Մերձավոր Արևելք, Երևան, 2005, էջ 28-34:
6. Խեթերեն marnuwa բառը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 2007, էջ 45-51:
7. Արևապաշտությունը Վանա լճի ավազանում, Մերձավոր Արևելք, Երևան, 2008, էջ 93-98:
8. Խեթա-հայկական լեզվական փոխառնչություններ, Մերձավոր Արևելք, Երևան, 2009, էջ 307-313:
9. Խուռիական <sup>d</sup>Ša(w)uš(k)a աստվածուհու անվան և կերպարի դրսևորումները հայկական առասպելական և լեզվական նյութերում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVIII, Երևան, 2011, էջ 239-251:
10. Հունական Արտեմիս և հայկական Աստղիկ դիցուհիների մի շարք ընդհանրությունների շուրջ, Մերձավոր Արևելք, Երևան, 2012, էջ 88-101:
11. The Hittite marnuwa, Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies, vol. V, Issue 1, 2010, pp. 127-132.

**АСМИК АРУТЮНОВНА АМАЯКЯН  
ГРИГОР КАПАНЦЯН И ХЕТТОЛОГИЯ  
(ХЕТТСКО-АРМЯНСКИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫЕ ВЗАИМОСВЯЗИ)  
Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по  
специальности 07.00.02-“Всемирная история”.**

**Защита состоится 18-го декабря 2013 г, в. 14:00, на заседании  
специализированного совета 006 «Всемирная история», действующего при  
Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр.Маршала  
Баграмяна, 24/4.**

**РЕЗЮМЕ**

Изучение, анализ и оценка исследований Григора Капанцяна, касающихся хеттско-армянских историко-культурных параллелей крайне актуальны, так как данные вопросы продолжают быть неоднозначными и сегодня вместе с другими некоторыми проблематичными вопросами. Таковыми являются локализация индоевропейской прародины, определение временного отрезка проникновения хеттов в Малую Азию, проблемы, связанные с определением временного периода формирования армянского народа и его прародины, непосредственный или опосредствованный характер и хронология хеттско-армянских языковых и культурных взаимосвязей, принятие или отрицание некоторых общих черт армянского языка с хетто-лувийскими языками, отождествление самоназвания армян “хай” с названием политического образования Хайаса, локализация страны Хайаса и другие проблемы, непосредственно связанные с этногенезом армянского народа.

Целью научной диссертации является извлечение из работ Г.Капанцяна исследований и размышлений, посвященных хеттско-армянским историко-культурным взаимосвязям и параллелям, их оценка с учетом эпохи деятельности ученого, попытка показать насколько они сохранили свою актуальность в контексте нынешних достижений хеттологии и арменоведения в данных областях.

Тема “Григор Капанцян и хеттология” впервые вводится в научный оборот, что является ее научной новизной. Отдельные области исследований Г.Капанцяна (история, языкознание, мифология) рассматриваемые в данной диссертационной работе, а также некоторые положения освещались в работах различных исследователей, в зависимости от того, насколько тема их работ касалась обсуждений и анализа взглядов ученого. Однако целостный, обобщающий подход вместе с рядом постановок собственных вопросов, сформированных диссертантом к данным аспектам исследований ученого, которые освящаются, обсуждаются и оцениваются в контексте достижений современной науки, применяется впервые.

Диссертация состоит из введения, трех глав (которые в свою очередь разделены на девять параграфов), заключения, списка использованных источников и литературы, а также приложения.

Во **Введении** обосновываются актуальность выбора темы, определяются

цели и задачи исследования, разъясняется научная новизна, подчеркиваются методологическая основа и практическое значение работы, а также дается краткий обзор использованных источников и литературы.

Первая глава диссертации, озаглавленная **“Хайасская гипотеза этногенеза армян по работам Г.Капанцяна”** состоит из четырех параграфов. В первом параграфе – **“Хайаса-Аззи по работам Г.Капанцяна”** кратко рассматриваются хеттские клинописные тексты XV-XIII веков до н.э., где упоминаются политические единицы Хайаса и Аззи, а также ассирийские источники XIII-XII веков до н.э., содержащие важные сведения о политической ситуации на Армянском нагорье. В данном параграфе также детально представлены капанцяновская локализация страны Хайаса и ее топонимов, их этимология, анализ с точки зрения современной науки. Особое внимание уделено обсуждению взглядов Г.Капанцяна и других ученых относительно хайасских топонимообразующих суффиксов. Указанные суффиксы были сопоставлены с хетто-лувийскими и хуррито-урартскими топонимообразующими суффиксами, что позволило сделать предварительные выводы, согласно которым в хайасских топонимах преобладают хетто-лувийские языковые элементы.

Во втором параграфе **“Этимология хайасских собственных имен по работам Г.Капанцяна”** подробно рассматривается капанцяновская этимология дошедших до нас хайасских пяти собственных имен (Anniya, Hukkana, Karanni, Mariya, Mutti).

В третьем параграфе, озаглавленном **“Хайасские теонимы по работам Г.Капанцяна”** подробно обсуждаются взгляды ученого на структуру хайасского пантеона и этимологию теонимов. Г.Капанцяна верно указывает, что главные культовые центры армян были расположены в Высокой Армении и прилегающих областях, где, согласно большинству исследователей и локализуется Хайаса. Фактически, Г.Капанцяна ясно видит преемственность между хайасским и армянским пантеонами- точка зрения, которая получила дальнейшее развитие в работах других специалистов, включая нас.

В четвертом параграфе, именуемом **“Вопросы этногенеза армян по работам Г.Капанцяна”**, представлены научные взгляды ученого относительно сложного процесса этногенеза армян, в котором главная роль отводится политическому образованию Хайаса и хайасскому языку. О достоверности данной гипотезы могут свидетельствовать следующие факты: название государства Хайаса явным образом созвучно названию эндонима “хай”, Хайаса располагается на Армянском нагорье, а согласно наиболее распространенной точки зрения, в Высокой Армении и прилегающих областях. При данной локализации выступает еще один серьезный аргумент: древние культовые центры языческих божеств армян располагаются на этих территориях, что предполагает определенное духовно-культурное наследие между армянским и хайасским пантеонами.

Вторая глава диссертации **“Хеттско-армянские ритуально-мифологические взаимосвязи”**, состоит из трех параграфов. В первом параграфе **“Особенности хеттской и армянской мифологии”** в общих чертах представлены особенности



хеттской и армянской патнеонов и мифологий. В этом параграфе рассматриваются общие черты в верованиях двух народов, восходящие к индоевропейской общности и делается попытка дать типологизацию хеттско-армянских ритуально-мифологических параллелей.

Во втором параграфе *“Хеттско-армянские ритуально-мифологические взаимосвязи по работам Г.Капанцяна”* мы обращались к положениям, нашедших место в работах Г.Капанцяна, которые мы рассмотрели в контексте современной науки, сделав ряд собственных наблюдений и выдвинув соответствующие гипотезы. В своей работе *“Малоазийские (азианические) боги у армян”* ученый сделал попытку найти параллели хеттско-хурритских теонимов и образов в армянском материале, наиболее достойными внимания из которых являются сопоставление армянского теонима Торк с именем и образом хетто-лувийского божества Tarḫu, Tarḫunt, сравнение образа хетто-лувийской богини Ḫebat с армянской Анаит, вероятность выведения армянского слова astuae<sup>4</sup> из хетто-лувийского теонима Sivat, связь хетто-лувийского теонима Masanes с армянским именем Маџан, его образом, итд.

Третий параграф, озаглавлен *“Хеттско-хеттский миф о божестве Телепинус по работам Г.Капанцяна”*. В нем обсуждается статья Г.Капанцяна *“Об одном хеттском мифе в связи с журавлем и божеством весны”*. С сожалением мы должны отметить, что ученый, основываясь на крайне ограниченном материале, известным в то время, не мог делать правильных выводов.

Третья глава *“Хеттско-армянские языковые взаимосвязи по работам Г.Капанцяна”*, состоит из двух параграфов. В первом параграфе, озаглавленном *“Вопрос хеттско-армянских языковых взаимосвязей”* подробно представлены взгляды Капанцяна на ряд проблем языкознания, особенно касающихся армянского и хеттского языков, которые он считает *“азианическими”*. Показана ошибочность как *“азианической”* теории, так и точек зрения Капанцяна относительно *“смешанных языков”*, что доказывается на основании данных современного языкознания. Также представлена самая большая заслуга ученого, а именно поднятие вопроса о хеттско-армянских языковых параллелях, осуществленные в данной области исследования и наблюдения, многие из которых продолжают оставаться в научном обороте в работах как армянских, так и зарубежных авторов, найдя свое место в этимологических словарях хеттского языка.

В следующем параграфе *“Хеттско-армянские лексические параллели”* впервые наиболее целостным образом и единым списком приведены хеттско-армянские лексические параллели в работах Г.Капанцяна с четкими ссылками. Каждая параллель дается в виде словарной статьи, в которой приведены мнения других авторов относительно той или иной параллели. Впервые осуществлено разделение заимствованных из хеттского в армянский язык лексического пласта на смысловые подгруппы, что дает возможность сделать определенные предварительные умозаключения.

В **Заключении** обобщаются основные выводы диссертации.

**HASMIK HMAYAKYAN  
GRIGOR KAPANTSYAN AND THE HITTITE STUDIES  
(THE HITTITE-ARMENIAN HISTORICAL AND CULTURAL  
INTERRELATIONS)**

**The defense of the dissertation will take place at 14:00, on the 18<sup>th</sup> of December of 2013, the meeting of the Specialized Council 006 “World History” at the Institute of Oriental Studies of the NAS RA.**

**Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.**

**The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of “World History” 07.00.02**

**SUMMARY**

The study, analysis and valuing of Grigor Kapantsyan’s works, relating to the Hittite-Armenian historical and cultural correspondences are extremely important, as these issues remain problematic together with other unequivocal questions. Such are localization of the Indo-European homeland, definition of the period when the Hittites penetrated to the Asia Minor (is the indeed moved here), time frames of the ethnogenesis of the Armenian people, its Urheimat, direct or indirect character and chronology of Hittite-Armenian linguistic and cultural interrelations, acceptance or denial of some common features of the Armenian language with the Hittite-Luwian languages, identification of the Armenian endonym ‘hay’ with the name of the political unit Hayasa, localization of Hayasa and other issues, straightly related with ethnogenesis of the Armenian people.

The purpose of this dissertation is to bring out from Kapantsyan’s works his researches and considerations, devoted to the Hittite-Armenian historical and cultural interrelations and correspondences, their valuing and the same time taking into the account the epoch when the researcher lived and worked as well as showing to what extent they preserved their actuality in the context of the current achievements of the Hittite and the Armenian studies in these fields.

The topic “Grigor Kapantsyan and the Hittite Studies” is being introduced in the scientific circulation for the first time and this is its scientific novelty. Some aspects of the Grigor Kapantsyan’s studies (history, linguistics and mythology) reviewed in this particular dissertation as well as some of his suggestions have been introduced by various researchers in their papers, depending on to what extent these suggestions concerned their subject of studies and opinions expressed. However this is the first time that such a holistic, generalizing approach simultaneously with a number of queries shaped by the dissertator around these aspects of the scientist’s studies that are introduced, discussed and valued in the context of the achievement of the modern science, is being applied.

The dissertation consists of three chapters (that are subdivided to nine paragraphs), conclusion, bibliography and the Annex.

The **Introduction** justifies the choice of the topic of the dissertation, defines the targets and tasks of the study, explains the scientific novelty, underlines the methodological base and the practical significance of the work as well as gives a brief review of the used sources and literature.

Chapter I “*The Hypothesis of the Ethnogenesis of the Armenian People in Grigor Kapantsyan’s Works*” consists of four paragraphs. The first paragraph “*Hayasa-Azzi according to G.Kapantsyan’s works*” briefly touches upon the Hittite cuneiform texts of the XV-XIII cc. BC, which mention political formation of Hayasa and Azzi as well as the Assyrian sources of XIII-XII cc. BC containing important data information about political situation on the Armenian Highlands.

In this paragraph the dissertator also makes a detailed presentation of Hayasa’s localization by Kapantsyan and etymology of its toponyms, their analyzes from the point of view of the modern science. Special attention is given to discussion of Kapantsyan and other researchers’ opinions on Hayasa toponymical suffixes that allows us to draw preliminary conclusions that the Hittite-Luwian linguistic elements prevail in the Hayasa toponyms.

In the second paragraph “*Etymology of Hayasa Personal Names according to G.Kapantsyan’s Works*”, the dissertator makes a detailed review of the five Hayasa personal names that have survived to us (Anniya, Hukkana, Karanni, Mariya, Mutti).

In the third paragraph named “*The Hayasa Theonyms according to G. Kapantsyan’s Works*” the dissertator discusses in details Kapantsyan’s views on the structure Hayasa pantheon structure and etymology of its theonyms.

Grigor Kapantsyan correctly mentions that the main cult centers of the Armenians have been located in Upper Armenia and the adjacent territories, where, according to the majority of researchers Hayasa is localized. In fact, Grigor Kapantsyan clearly sees succession between the Hayasa and the Armenian pantheons – an opinion that received further development in other specialists’ studies, including us.

The fourth paragraph named “*The Questions of Ethnogenesis of the Armenian People according to G.Kapantsyan’s Works*”, presents the scientific views of Kapantsyan on the complex process of the ethnogenesis of the Armenian People, in which he assigns the main role to the political formation of Hayasa and the Hayasa language. Trustworthiness of this hypothesis can be supported by the following facts: name of Hayasa is clearly corresponds to ethnonym “hay”, Hayasa is located on the Armenian Highland (in Upper Armenia and adjacent territories according to the most circulated view). Another serious argument will appear in case of this localization: the ancient cult centers of the pagan deities of the Armenians are also located on the above-mentioned region that suggests a definite spiritual and cultural heritage between the Armenian and the Hayasa pantheons.

Chapter II of the dissertation “*The Hittite-Armenian Ritual-Mythological Interrelations*” consists of three paragraphs. The first paragraph named “*The Peculiarities of the Hittite and the Armenian Mythologies*” briefly presents peculiar features of the Hittite and the Armenian pantheons and mythologies as well as

common elements in the two peoples' beliefs that trace back to the Indo-European unity and the dissertator makes an attempt of typologizing of the Hittite-Armenian ritual and mythological correspondences.

In the second paragraph "*The Hittite-Armenian Ritual-Mythological Interrelations according to Kapantsyan's Works*" we addressed his ideas found in his studies, that we have reviewed in the context of the modern science, making a number of own observations and putting forward relevant hypotheses. In his "Maloazjjskie (azianicheskie) bogi u armanian" "(Minor Asian (Asiatic) Gods of Armenian)", the researcher have made and attempt to find correspondences of the Hittite-Hurrian theonyms in the Armenian material, the most remarkable of which is comparing of the Armenian theonym Tork' with name of the Hittite-Luwian deity Tarḫu, Tarḫunt, the character of the Hittite-Luwian Ḫebat with the Armenian Anahit, deriving of the Armenian word *astuac* ("God") from the Hittite-Luwian theonym Sivāt, relating the Hittite-Luwian theonym Masanes with name and figure of Armenian Maṣan.

The third paragraph bears title "*The Hattian-Hittite Myth of Deity Telepinus according to G.Kapantsyan's Works*". It discusses Grigor Kapantsyan's article "Around a Hittite Myth related to Crane and the Spring Deity". Unfortunately we must mention that the researcher relying on an extremely limited material of the time, was not able to arrive to correct conclusions.

Chapter III "*The Hittite-Armenian Linguistic Interrelations according to G.Kapantsyan's Works*" consists of two paragraphs. The first paragraph "*The Question of the Hittite-Armenian Linguistic Interrelations*" makes a detailed presentation of Kapantsyan's views on a number of linguistic problems, especially relating to the Armenian and Hittite languages, which he considers to be "asianic". At the same time falsity of the "Asianic theory" as well as Kapantsyan's view on 'mixed languages' are shown, proved by the modern linguistics knowledge. The dissertator brings to the attention of the audience the greatest merit of the scientist – raising the issue of the Hittite-Armenian linguistic correspondences, his studies and observations related to the fields concerned, many of which continue remaining in the subject of the scientific studies of the Armenian and foreign authors, finding its place in etymological dictionaries of the Hittite language.

In the next paragraph "*The Hittite-Armenian Lexical Parallels*" the dissertator for the first time gives a complete and integral list of the Hittite-Armenian lexical correspondences in Kapantsyan's works with clear references. Each correspondence is presented in the form of a dictionary entry with views of other authors regarding the given correspondences. For the first time a breakdown of the Hittite borrowed lexical stratum in the Armenian language based on semantic groups has been done, that enabled us doing preliminary findings.

The **Conclusion** summarizes main findings that the author discovered during her work over the dissertation.

